ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 170 - Ա **15 հունիսի 2017 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30 - Ի N 68 – Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ և 1.15-րդ կետերի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2009 թվականի հոկտեմբերի 30-ի «Մարզային հանձնաժողով ստեղծելու մասին» N 68–Ա կարգադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ կարգադրության 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի գյուղատնտեսական բարձրարժեք հողատեսքերն ավելի ցածրարժեք հողատեսքերի փոխադրելու համար անհրաժեշտ եզրակացություն տրամադրելու նպատակով ստեղծել մարզային հանձնաժողով հետևյալ կազմով՝

Բոթոյան Կ. – ՀՀ Գեղարքունիքի մարզպետ, հանձնաժողովի նախագահ

Համբարձումյան Հ. – մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

Ստեփանյան Է. – մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի վարիչ

Մելքոնյան Ս. – ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գեղարքունիքի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն /համաձայնությամբ/

Բարսեղյան Ա. – ՀՀ կառավարությանն առընթեր ԱԳԿ պետական կոմիտեի Գեղարքունիքի մարզային ստորաբաժանման ղեկավարի տեղակալ /համաձայնությամբ/

Սիոյան Հ. – ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի «Գավառ» ՋՕԸ-ի գործադիր տնօրեն /համաձայնությամբ/

Համապատասխան համայնքի ղեկավարը /համաձայնությամբ/

Համապատասխան համայնքապետարանի գյուղատնտեսության գծով մասնագետը /համաձայնությամբ/»

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ԲՈԹՈՅԱՆ